ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ–երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) վերաբերյալ

Համայնքի ավանումը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ջրաշեն	Ավագանու հերթական նիստ	15.10.2021թ.	11:00	Ջրաշենի համայնքապետարան (գ. Ջրաշեն 8Փ. 32)

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 8
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը.

Օրակարգ

1.Ջրաշեն համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաղորդման մասին:
2.Համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3.<<Մայֆորեստ էյիմ>> բնապահպանական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով համայնքի գյուղատնտեսական նշանակության հաղամաս տրամադրելու մասին:
4.Համայնքային սեփականություն հանդիսացող բեռնիչ անիվավոր էքսկավատոր New Holland B80B մակնիշի գյուղտեխնիկան <<Ջրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվին անհատույց տրամադրելու մասին:
5.Ջրաշեն համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:
6.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքիներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ Ջրաշեն համայնքի տարեկան բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն:

1.Ընդամենը եկամուտներ -85898.7 հազար դրամ,
2.Ընդամենը ծախսեր - 72222.0 հազար դրամ,
3.Եկամուտների գերազանցումը ծախսերին- 13676.0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 37-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և ելնելով սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու անհրաժեշտությունից՝

Զրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի 2021 թվականի բյուջեի եկամտային մասի 38 դասի 01 խմբի 00 կարգի 900245181236 Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) հաշվին նախատեսել 57571.8 հազար դրամ,

- 09 դասի 01 խմբի 00 կարգի 900245181038 հողի հարկ հավով նախատեսված 5653.4 հազար դրամից պակասեցնել 5028.4 հազար դրամ թողնել 625.0 հազար դրամ և այն տեղափոխել

-40 դասի 02 խմբի 00 կարգի 900245002713 հաշվին որպես անշարժ գույքի հարկ/ֆիզիկական անձանց,

- 49 դասի 01 խմբի 00 կարգի 90024518187 հաշվով (Զրաշեն համայնքի ՊՖ-ից հատկացում) նախատեսված 27972.7 հազար դրամի փոխարեն նախատեսել 27902.5 հազար դրամ:

2. Ծախսերի կատարման ժամանակացույցում կատարել հետևյալ փոփոխությունները՝ - 08 դասի 01 խմբի 01 կարգի 900242336023 (Սպորտային միջոցառումների կազմակերպում) հաշվի 5112 հոդվածով նախատեսված 5000.0 հազար դրամից պակասեցնել 450.0 հազար դրամ,

-06 դասի 04 խմբի 01 կարգի 900242821016 հաշվի (Արտաքին լուսավորություն) 5134 հոդվածով նախատեսված 2000.0 հազար դրամից պակասեցնել 400.0 հազար դրամ,

- 11 դասի 01 խմբի 02 կարգի 900242377027 (Զրաշենի պահուիստային ֆոնդ) հաշվի 4891 հոդվածով նախատեսված 2230.7 հազար դրամից պակասեցնել 629.9 հազար դրամ,

- 09 դասի 02 խմբի 02 կարգի 900242481019 հաշվի (Հանրակրթական ուսուցում) 4637 հոդվածով նախատեսված 1500.0 հազար դրամի փոխարեն նախատեսել 1700.0 հազար դրամ,

- 10 դասի 03 խմբի 01 կարգի 900242317031 (Ջրաշենի Հարազատին կորցրած անձինք) հաշվի 4726 հոդվածով նախատեսված 1000.0 հազար դրամի փոխարեն նախատեսել 1500.0 հազար դրամ,
- 04 դասի 02 խմբի 01 կարգի 900242652015 (քարտեզագրում) հաշվի 5129 հոդվածով նախատեսել 13300.0 հազար դրամ,
- 01 դասի 01 խմբի 01 կարգի 900242001106 (Կառ.մարմնի պահպանում սուբվեցիոն) հաշվի 5121 հոդվածով նախատեսել 16640.1հազար դրամ,
- 01դասի 01 խմբի 01 կարգի 900242211028 (Ջրաշեն գյուղապետարան) հաշվի 5121 հոդվածով նախատեսված 26000.0 հազար դրամից պակասեցնել 589,7 հազար դրամ,
- 04 դասի 05 խմբի 01 կարգի 90024271022 (փողոցների պահպանում և շահագործում) հաշվի 5113 հոդվածով նախատեսված 27335.0 հազար դրամից պակասեցնել 9548.4 հազար դրամ և տեղափոխել -06 դասի 04 խմբի 01 կարգի 900242821016 հաշվի (Արտաքին լուսավորություն) 5112 հոդվածով նախատեսված 24000.0 հազար դրամից պակասեցնել 5225.0 հազար դրամ՝
- 06 դասի 04 խմբի 01 կարգի 900242001122 (Արտաքին լուսավորություն սուբվենցիա) հաշվի 5112 հոդվածով նախատեսել 15055.0 հազար դրամ,որպես էներգաարդյունավետ լուսավորության համակարգի կառուցում սուբվենցիա 2021թ.,
- 06 դասի 04 խմբի 01 կարգի 900242001130 (Արտաքին լուսավորություն սուբվենցիա) հաշվի 5112 հոդվածով նախատեսել 3670.0 հազար դրամ, որպես 20 կՎտ պիկ հզորության ֆոտովոլտային արևային կայանի կառուցում սուբվենցիա 2021թ.,
- 04 դասի 05 խմբի 01 կարգի 900242001114 (Ասֆալտ-բետոն վերանորգում սուբվենցիա) հաշվի 5113 հոդվածով նախատեսել 21419.6 հազար դրամ:

3. Ֆինանսական ծախսերի կատարման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

‹‹ՄԱՅՖՈՐԵՍԹ ԷՅԷՄ››
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում նախատեսվող անտառհիմնման աշխատանքների վերաբերյալ հանրային լսումների /քննարկումների/ 07.07.2020թ. արձանագրությունը,

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի 06-095-0261-0086 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 109.15484 հա մակերեսով հողամասը անհատույց օգտագործման իրավունքով 25/քսանհինգ/տարի ժամկետով տրամադրել ‹‹Մայֆորեսթ էյէմ›› բնապահպանական հասարակական կազմակերպությանը՝ անտառհիմնման համար:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին ‹‹Մայֆորեսթ էյէմ›› բնապահպանական հասարակական կազմակերպության հետ կնքել հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԵՌՆԻՉ ԱՆԻՎԱՎՈՐ
ԷՔՍԿԱՎԱՏՈՐ NEW HOLLAND B80B
ՄԱԿՆԻՇԻ ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՆ <<ՋՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Համայնքայի սեփականություն հանդիսացող բեռնիչ անիվավոր էքսկավատոր New Hilland B80B մակինշի գյուղտեխնիկան անհատույց տրամադրել <<Ջրաշեն համայնքի արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով Զրաշեն համայնքի ղեկավարի առաջարկություն՝

Զրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Զրաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը մրցույթային կարգով 25-ի տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելուն:

1) Լոտ-1 Զրաշեն համայնքի 06-095-0246-0036 կադաստրային ծածկագրով 0.02 հա 5-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության արոտից 0.02 հա գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:Հողամասի մրցույթով վարձակալութամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային չափ 5400 ՀՀ դրամ, նախավճարը 270 ՀՀ դրամ:

2)Լոտ-2 Զրաշեն համայնքի 06-095-0036-0016 կադաստրային ծածկագրով 0.08 հա 5-րդ ՝կարգի գյուղատնտեսական նշանակության արոտից 0.08 հա գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:Հողամասի մրցույթով վարձակալութամբ տրամադրելու տարեկան վարձավճարի մեկնարկային չափ 21600 ՀՀ դրամ, նախավճարը 1080 ՀՀ դրամ:

2.Համայնքի ղեկավարին վարձակալության մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակել սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը մեկնարկային գինը, օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու էլեկտրահաղորդման գծերը, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հաղամասերի դեպքում նաև որակավորման հատկանիշները) ինչպես նաև տվյալ հողամասի մասին սահմանափակումները (ներառյալ՝ սեվիտուտները):

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 41-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 26-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զրաշեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին> թիվ 16-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Զրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**